

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ ՊՐՆ. Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ Վարդան Վասպուրյան

ՀԱՍՑԵ Գ. Գյուլբեր, Գոգոլի փող, պող. 5


ՀԵՌ. 077 654624

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ _____

ԴԻՄՈՒՄ

Պարզապես որոշումով, անփականությամբ
իրավունքով ինչ պարզապես խախտումներ
փողով ա 3 կապեր շինությամբ ցրվելու
և պահպանման և անպահպանման համար
ցրվելու հոգանալ օրակն, ինչ:
Պրծումներ կից կա նաև հոգանալ հարմարեցվել
և շարժումներ փոխ:

25 05 2023 թ.
Օր ամիս տարի



Դիմող՝ Դ. Երև
(ստորագրություն)

Վարդան Վասպուրյան
(անուն, ազգանուն)



Գործ № ՇԴ/2555/02/20

ՎՃԻՌ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

10 նոյեմբերի 2020թ.

ք. Գյումրի

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության դատարանը հետևյալ կազմով՝

Նախագահող դատավոր՝
Քարտուղար՝

Գագիկ Հովհաննիսյան
Մարիետա Մուրադյան

Մասնակցությամբ՝

Հայցվոր՝

Մարիամ Հարությունի Ասատրյան

(Անձնագիր՝ AN0264755, տրված՝ 19.11.2012թ-ին
016-ի կողմից)

Հայցվորի
ներկայացուցիչ՝

Սուսաննա Արտավազդի Մխիթարյան

(փաստաբանական գործունեության արտոնագիր
№ 136)

Պատասխանող՝

**ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն
ապահովող ծառայության Շիրակի
մարզային բաժին**

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Մարիամ Հարությունի Ասատրյանի ընդդեմ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Շիրակի մարզային բաժնի՝ առուվաճառքի գործարքը վավեր ճանաչելու պահանջի մասին.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Մարիամ Հարությունի Ասատրյանը 2020 թվականի հուլիսի 06-ին հայցադիմում է ներկայացրել Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Շիրակի մարզային բաժնի՝ առուվաճառքի գործարքը վավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը վարույթ է ընդունվել 15.07.2020թ.:

Դատարանը, ի կատարումն 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Նախնական դատական նիստում լուծման ենթակա հարցերի շրջանակը» վերտառությամբ 167-րդ հոդվածի, նախնական դատական նիստի ընթացքում պարզել է հայցի առարկան, հայցի փաստական և իրավական հիմքերը, դատավարության մասնակիցների կազմը և քննարկել է գործի քննությանն այլ անձանց ներգրավելու հարցը, պարզել է վիճելի իրավահարաբերության բնույթը, այդ թվում՝ կիրառելի իրավական նորմերը՝ չսահմանափակվելով գործին մասնակցող անձանց մատնանշած իրավական նորմերով, պարզել է հայցվոր կողմը պնդում է արդյոք իր պահանջները, պատասխանող կողմը արդյոք ամբողջությամբ կամ մասնակի ընդունում է հայցվորի պահանջները, և գործին մասնակցող անձինք չեն ցանկանում արդյոք կնքել հաշտության համաձայնություն կամ վեճը լուծել հաշտարարության միջոցով՝ պարզաբանելով հաշտարարության էությունը, գործին մասնակցող անձանց հետ քննարկել

է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի, այդ թվում՝ ապացուցման կարիք չունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի շրջանակը, ապացուցման պարտականությունը նրանց միջև բաշխելու հարցը, նրանց կողմից ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու ժամկետը, միաժամանակ գործին մասնակցող անձանց հետ քննարկել և լուծել ներկայացված ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության հարցը:

Նախնական դատական նիստերի ընթացքում ըստ անհրաժեշտության իրականացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Նախնական դատական նիստը» վերտառությամբ 16-րդ գլխով նախատեսված գործողությունները:

Գործի դատաքննությունն ավարտվել է 26.10.2020 թվականին և հայտարարվել է եզրափակիչ դատական ակտի հրապարակման ժամանակը՝ 10.11.2020 թվականին, և վայրը՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

2. Հայցվորի դիրքորոշման հակիրճ բովանդակությունը.

Հայցվոր կողմը հայցադիմումով և դատաքննության ընթացքում հայտնել է, որ 02.06.2003 թվականին Շիրակի ստորաբաժանման հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից կազմակերպված աճուրդով ձեռք է բերել 7 անուն գույք, որից 3-ը՝ անշարժ գույք, Գյումրու Բուլվարային թաղամասի թիվ 3 հասցեում:

Կնքված առուվաճառքի պայմանագիրը նոտարական վավերացում չի ստացել իր կամքից անկախ, վաճառողի նախաձեռնության բացակայության պատճառով:

Անշարժ գույքը իրենից ներկայացնում է նույն տարածքում, 3 մասնաշենքերի տեսքով շինություններ: Գույքը ձեռքբերման օրվանից գույքը հանձնվել է հայցվորին, որոնք հայցվորը տիրապետում և օգտագործում է առ այսօր:

Երեք միավոր անշարժ գույքերից մեկը՝ Գյումրու, Բուլվարային 3 հասցեում գտնվող խանութի շենքը հայցվորը կարողացել է օրինականացնել միայն 03.11.2009 թվականին կողմերի միջև կնքված, նոտարական վավերացմամբ առուվաճառքի պայմանագրով, իսկ հողի մասով՝ վարչական դատարանի թիվ ՎԴ5/0092/05/10 վարչական գործով վճռի հիման վրա:

Մյուս երկու մասնաշենքերի մասով պատասխանողը առանձին անշարժ գույքի պայմանագիր չի կնքել: Կողմերը պայմանավորվել են, որ այդ հարցը թողնեն խանութի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումից հետո՝ երբ լուծված կլինի շինություններով ծանրաբեռնված հողի հարցը:

Խանութով ծանրաբեռնված հողի հարցը լուծվել է դատական կարգով:

Վարչական դատարանի 06.04.2010 թվականի վճռով պարտավորեցրել են Գյումրու համայնքապետարանի խանութի շինությամբ ծանրաբեռնված մասով հայցորդի հետ կնքել հողի անհատույց օգտագործման պայմանագիր: Տրվել է առանձին հասցե գրանցվել է հայցվորի սեփականության իրավունքը խանութի նկատմամբ:


Դրանից հետո, տարիներ շարունակ, դիմել է և ԴԱՀԿ ծառայությանը և Գյումրու համայնքապետարանին՝ մյուս երկու մասնաշենքերի պայմանագրի վավերացման և սպասարկման տարածք հանդիսացող հողամասերի հատկացման վերաբերյալ, հայցվորի դիմումը թողել են անպատասխան:

Այդ մասնաշենքերը հանդիսանում են նույն Գյումրու Բուլվարային թիվ 3 հասցեում գտնվող, նախկին ԲՄՏ-3 ՓԲԸ-ին պատկանող երկու հարակից վարչական կիսակառույց շենքերը:

Հայցվորը հայտնել է, որ տարիներ շարունակ սեփականատիրոջ իրավունքով տիրապետում է շենքերը, պահպանել երրորդ անձանց ոտնձգություններից, որոնց վրա ժամանակավոր ծածկ է տեղադրել և օգտագործել է տարբեր նպատակների համար:

Այժմ հայցվորը ցանկանում է ձեռք բերված գույքը վաճառել, սակայն տիրապետելով այն դրեթե քսան տարի չի կարող վաճառել, գույքի նկատմամբ առուվաճառքի նոտարական վավերացման բացակայության և այդ պատճառով սեփականության իրավունքը գրանցված չլինելու պատճառով:

Հայցվորը 2020 թվականին կրկին դիմել է պատասխանողին: 21.05.2020 թվականին ստացել է գրավոր պատասխան, որ առուվաճառքի գործարքի վավերացման ժամկետը բաց է թողել, պետք է դիմել դատարան սեփականության իրավունքի ճանաչման հայցով:



Հայցվորը նշել է, որ արտադատական կարգով իր սեփականության իրավունքը չի կարող գրանցել, որպես սեփականատեր իր գույքը լիարժեք տնօրինելու համար, ուստի դիմում է դատական պաշտպանության՝ պայմանագիրը վավեր ճանաչելու և իր գնած գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով:

Հայցվորը առուվաճառքի պայմանագրով վճարել և գնել է նշված հասցեի շինությունները, որոնք հանձնվել է հայցվորի տիրապետմանը, չկա շենքերին որևէ հավակնորդ, այն վիճելի չէ, սակայն վաճառողը ինչ-ինչ պատճառներով խուսափում է և այն չի ներկայացնում նոտարական վավերացման:

Մասնաշենքերի նկատմամբ սեփականության իրավունք գրանցված չէ, նախկին FUS2-3 ՓԲԸ-ն, ում պատկանել է վարչական շենքերը, լուծարված է, շենքերը Գյումրու համայնքի հաշվեկշռում չեն:

Ելնելով վերոգրյալից և վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածը հայցվոր կողմը խնդրել է Դատարանին վավեր ճանաչել 02.06.2003 թվականին իր և պատասխանողի միջև կնքված առուվաճառքի գործարքը՝ Գյումրու Բուլվարային թիվ 3 հասցեում գտնվող նախկին FUS2-3 ՓԲԸ-ին պատկանող երկու վարչական մասնաշենքերը գնելու մասով (պայմանագրի թիվ 6 և 7 կետեր):

3. Պատասխանողի դիրքորոշման հակիրճ բովանդակությունը.

Պատասխանող կողմը 14.10.2020թ. գրավոր դիրքորոշում է ներկայացրել Դատարան հայտնելով, որ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հարկադիր կատարողը 02.06.2003թ. հայցվորի հետ կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

Պատասխանող կողմը հայտնել է նաև, որ Ծառայությունը չի կարող տրամադրել վարույթներից նյութեր և այլ տեղեկատվություններ, քանի որ նշված կատարողական վարույթները ՀՀ արդարադատության նախարարի 16.01.2012թ. թիվ 8-Ա հրամանով և 27.01.2009թ. 11-Ա հրամանով արխիվացվել և ոչնչացվել է:

4. Պատճառաբանական մաս.

4.1 Իրավական խնդիր.

Սույն քաղաքացիական գործով հայցի իրավական խնդիրը լուծելու համար պետք է պատասխանել հետևյալ հարցին:

- գործարքը կատարած կողմի պահանջով, այն կարող է արդյոք վավեր ճանաչվել, եթե կողմերից մեկը լրիվ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից:

4.2 Ապացուցման ենթակա փաստեր.

1. 02.06.2003 թվականին հայցվոր Մարիամ Հարությունի Ասատրյանը ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Շիրակի մարզային բաժնից, ԴԱՀԿ ծառայության աճուրդի միջոցով գնել է 7 միավոր գույք, այդ թվում առուվաճառքի պայմանագրի 6-րդ կետում նշված, Գյումրու Բուլվարային 3 հասցեում գտնվող, նախկինում FUS2-3 ՓԲԸ-ին պատկանող, թիվ 1 վարչական մասնաշենքը (մակերես՝ 665,72 քմ) և պայմանագրի 7-րդ կետում նշված, Գյումրու Բուլվարային 3 հասցեում գտնվող, նախկինում FUS2-3 ՓԲԸ-ին պատկանող, թիվ 2 վարչական մասնաշենքը (673,3 քմ մակերես): (այս ապացուցման ենթակա փաստի ապացուցման բեռը կրում է հայցվոր կողմը) (ապացույց՝ Մարիամ Հարությունի Ասատրյանի և ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության մարզային բաժնի կողմից 02.06.2003թ. հասարակ գրավոր ձևով կազմված «Առուվաճառքի պայմանագիր» վերնագրմամբ փաստաթուղթ, պատասխանողի դիրքորոշում, № 2 արձանագրություն՝ գույքը (ապրանքը) աճուրդով վաճառելու մասին, № 399, № 400 մուտքի դրամարկղային օրդեր (անդորրագրեր), թիվ ՎԴ5/0092/05/10 վարչական գործով 06.04.2010թ. կայացված վճիռ):

2. Առուվաճառքի պայմանագրի 6-րդ կետում նշված, Գյումրու Բուլվարային 3 հասցեում գտնվող, նախկինում FUS2-3 ՓԲԸ-ին պատկանող, թիվ 1 վարչական մասնաշենքը (մակերես՝ 665,72

քմ) և պայմանագրի 7-րդ կետում նշված, Գյումրու Բուլվարային 3 հասցեում գտնվող, նախկինում ԲՍՏ-3 ՓԲԸ-ին պատկանող, թիվ 2 վարչական մասնաշենքը (673,3 քմ մակերես) հանդիսանում են անշարժ գույք: (այս ապացուցման ենթակա փաստի ապացուցման բեռը կրում է հայցվոր կողմը) (ապացույց՝ ԱԶ Արսեն Նուրիջանյանի կողմից 14.09.2020թ. տրված եզրակացությունը այն մասին, որ Գյումրի քաղաքի Բուլվարային 3 հասցեում կատարված չափագրության արդյունքներով պարզվել է, որ հողամասի վրա առկա է բետոնյա հիմք, որը համաձայն «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համարվում է անշարժ գույք-հողի, ամրակայված գույքի և հողի ու ամրակայված գույքի նկատմամբ իրավագործությունների ամբողջություն):

3. Պատասխանողը առուվաճառքի պայմանագրի 6-րդ կետում նշված, Գյումրու Բուլվարային 3 հասցեում գտնվող, նախկինում ԲՍՏ-3 ՓԲԸ-ին պատկանող, թիվ 1 վարչական մասնաշենքը (մակերես՝ 665,72 քմ) և պայմանագրի 7-րդ կետում նշված, Գյումրու Բուլվարային 3 հասցեում գտնվող, նախկինում ԲՍՏ-3 ՓԲԸ-ին պատկանող, թիվ 2 վարչական մասնաշենքը (673,3 քմ մակերես), օտարելուց հետո խուսափում է նոտարական կարգով գործարքը վավերացնելու իր պարտականությունից: (այս ապացուցման ենթակա փաստի ապացուցման բեռը կրում է հայցվոր կողմը) (ապացույց՝ հայցվորի դիրքորոշում, պատասխանողի դիրքորոշում, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Շիրակի մարզային բաժնի կողմից 22.05.2020թ. տրված թիվ 16315/23 գրություն, համաձայն որի՝ Գ.Ասատրյանին հայտնվել է, որ 02.06.2003 թվականին Մ.Ասատրյանի և հարկադիր կատարող Գ.Աբդալլանի միջև կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր: «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ աճուրդում հաղթած մասնակցի կողմից գնման գինը ծառայության ստորաբաժանման դրամարկղ կամ դեպոզիտ հաշվին մուծելուց հետո՝ եօրյա ժամկետում, հարկադիր կատարողը նրա հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր: Սույն դրույթների պահպանմամբ՝ 02.06.2003 թվականին Մ.Ասատրյանի և հարկադիր կատարող Գ.Աբդալլանի միջև կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից հետո գնորդը և հարկադիր կատարողը պետք է ներկայանային նոտարական գրասենյակ՝ կնքված առուվաճառքի պայմանագիրը նոտարական վավերացման, ինչն ըստ էության տեղի չի ունեցել: Առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման ժամկետները բաց են թողնված):

4.3 Գիրառելի իրավունք.

Սույն քաղաքացիական գործով ենթակա են կիրառման հետևյալ իրավական նորմերը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնածիլ և այլ ձևերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրով գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է գույքը հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 273-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել ճանաչելու իր սեփականության իրավունքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 299-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գործարքների նոտարական վավերացումը պարտադիր է սույն օրենսգրքում նշված դեպքերում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե կողմերից մեկը լրիվ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից, դատարանն իրավունք ունի, գործարքը կատարած կողմի պահանջով, այն վավեր ճանաչել: Այդ դեպքում գործարքի հետագա նոտարական վավերացում չի պահանջվում:

Նշված նորմերի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը գործարք կատարած կողմի պահանջով գործարքը վավեր ճանաչելու համար սահմանել է հետևյալ փաստերի միաժամանակյա առկայությունը՝ 1) կողմերից մեկի կողմից գործարքի լրիվ կամ մասնակի կատարված լինելը, 2) մյուս կողմի խուսափելն օրենքով նախատեսված կարգով գործարքի վավերացումից (տես թիվ ԿԴ1/0133/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013թ. որոշումը):

ՀՀ Սահմանադրական դատարանն անդրադառնալով նշված հարցին՝ արձանագրել է, որ լուծելով նոտարական վավերացում պահանջող գործարքը վավեր ճանաչելու վերաբերյալ վեճ, յուրաքանչյուր դեպքում դատարանի խնդիրն է պարզել գործարքի օրինականությունը (իրավաչափությունը), գրավոր ձևի պահպանման փաստը, գործարքի նոտարական ձևը չպահպանելը և մեղավոր կողմին, գործարքի նոտարական վավերացումից կողմի խուսափելը (գործողությամբ կամ անգործությամբ) և դրա հիմքերը, նոտարական վավերացում պահանջող գործարքը կողմերից մեկի լրիվ կամ մասնակի կատարելու փաստը և դրա օրինականությունը (իրավաչափությունը) (տես ՀՀ Սահմանադրական դատարանի 15.05.2007 թվականի ՄԴՈ-702 որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներով, այդ թվում՝ թիվ ՏԴ3/0026/02/08 քաղաքացիական գործով 26.06.2009թ. կայացրած որոշմամբ, ելնելով օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթների վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշումներ՝ նշելով, որ օրենսդիրը գործարքը կատարած կողմի պահանջով գործարքը վավեր ճանաչելու համար սահմանել է անհրաժեշտ հետևյալ փաստերի միաժամանակյա առկայությունը՝

1. կողմերից մեկի կողմից գործարքի լրիվ կամ մասնակի կատարված լինելը, և

2. մյուս կողմի խուսափելն օրենքով նախատեսված կարգով գործարքի վավերացումից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առուվաճառքի պայմանագրով կողմերից մեկը (վաճառողը) պարտավորվում է մյուս կողմին (գնորդին) որպես սեփականություն հանձնել (գույք) ապրանք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և դրա համար վճարել որոշակի գումար (գինը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 561-րդ հոդվածի համաձայն՝ վաճառողը, անշարժ գույքի առուվաճառքի (այսուհետ՝ անշարժ գույքի վաճառքի) պայմանագրով պարտավորվում է գնորդի սեփականությանը հանձնել հողամաս, շենք, շինություն, բնակարան կամ այլ անշարժ գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 562-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 566-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագրում պետք է նշվեն տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս որոշակիորեն

սահմանել գնորդին՝ պայմանագրով փոխանցման ենթակա անշարժ գույքը, ներառյալ՝ համապատասխան հողամասում կամ այլ անշարժ գույքի կազմում անշարժ գույքի դիրքը որոշող տվյալներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 567 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը պետք է նախատեսի դրա գինը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույց է այն փաստական տվյալը, որի հետազոտման և գնահատման հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը:


ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցի տեսակներն են՝ վկայի ցուցումները, գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները, լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները, փորձագետի եզրակացությունը, մասնագետի բացատրությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից և գնահատումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ փաստի հաստատման համար բավարարության տեսանկյունից: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Դատարանը հետազոտված ապացույցը ճանաչում է անարժանահավատ, եթե դրա հետազոտման, գնահատման կամ այլ ապացույցների հետ համադրման արդյունքով հաստատվում է, որ դրանում պարունակվող տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, իսկ 4-րդ մասի համաձայն՝ դատարանի համար որևէ փաստ նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ սույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-4-րդ մասերով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր ապացույցներ են գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի մասին տեղեկություններ պարունակող անհատական կամ ներքին իրավական ակտերը, գործարքները, տեղեկանքները, գործարար և մասնավոր թղթակցությունը և այլ գրավոր նյութերը (փաստաթղթերը): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցը ներկայացվում է բնօրինակով կամ պատճենի ձևով: Բնօրինակը պարտադիր ներկայացվում է առաջին ատյանի դատարանի պահանջով կամ այն դեպքում, երբ համապատասխան փաստերը, օրենքին, այլ իրավական ակտերին կամ պայմանագրին համապատասխան, կարող են հաստատվել միայն բնօրինակով: Բնօրինակը, իսկ այն ներկայացնելու անհնարինության դեպքում դրա պատշաճ վավերացված պատճենը չներկայացնելու դեպքում առաջին ատյանի դատարանը պատճենը հանում է հետազոտման ենթակա ապացույցների շարքից:



4.4 Վերլուծություն.

Դատարանը, լսելով հայցվոր կողմին, ուսումնասիրելով ներկայացված ապացույցները, պատասխանողի դիրքորոշումը և գործի հանգամանքները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ գալիս է հետևյալ եզրահանգման.

Դատարանը գործի քննությունն իրականացրել է բացառապես հայցապահանջի շրջանակներում և սույն գործի քննությամբ հաստատված է համարում, որ Մարիամ Հարությունի Ասատրյանի և ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Շիրակի մարզային բաժնի միջև 02.06.2003թ. կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով հայցվոր Մ.Ասատրյանը ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Շիրակի մարզային բաժնից գնել է առուվաճառքի պայմանագրի 6-րդ կետում նշված, Գյումրու Բուլվարային 3 հասցեում գտնվող, նախկինում ԲԱՏՁ-3 ՓԲԸ-ին պատկանող, թիվ 1 վարչական մասնաշենքը (մակերես՝ 665,72 քմ) և պայմանագրի 7-րդ կետում նշված, Գյումրու Բուլվարային 3 հասցեում գտնվող, նախկինում ԲԱՏՁ-3 ՓԲԸ-ին պատկանող, թիվ 2 վարչական մասնաշենքը (673,3 քմ մակերես):

Դատարանը հաստատված է համարում նաև այն, որ վերը նշված պայմանագիրը նոտարական կարգով չի վավերացվել, քանի որ պատասխանողը չի ներկայանում նոտարական գրասենյակ՝ գործարքը նոտարական կարգով վավերացնելու համար, պատճառաբանելով, որ կատարողական վարույթը, որով տեղի է ունեցել հարկադիր աճուրդը, արխիվային վաղեմության հիմքով ոչնչացված է, ուստի նոտարական գրասենյակ ներկայացնելու անհրաժեշտ որևէ փաստաթուղթ հարկադիր կատարողը չի կարող նոտարական գրասենյակ ներկայացնել: Պատասխանողը դրանով խուսափում է գործարքի նոտարական վավերացումից:

Այսպիսով Դատարանը հաստատված է համարում, որ կողմերի միջև 02.06.2003թ. կնքվել է առուվաճառքի պայմանագրի 6-րդ կետում նշված, Գյումրու Բուլվարային 3 հասցեում գտնվող, նախկինում ԲԱՏՁ-3 ՓԲԸ-ին պատկանող, թիվ 1 վարչական մասնաշենքի (մակերես՝ 665,72 քմ) և պայմանագրի 7-րդ կետում նշված, Գյումրու Բուլվարային 3 հասցեում գտնվող, նախկինում ԲԱՏՁ-3 ՓԲԸ-ին պատկանող, թիվ 2 վարչական մասնաշենքի (673,3 քմ մակերես) գույքի առուվաճառքի գործարք, այդ գործարքն ամբողջությամբ կատարվել է, մասնավորապես՝ գնորդ Մարիամ Հարությունի Ասատրյանը վաճառող ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության մարզային բաժնին ամբողջությամբ վճարել է գործարքի արժեքը, իսկ վերջինս գործարքի առարկա հանդիսացող գույքը փոխանցել է գնորդին, սակայն վաճառողը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից, որպիսի պայմաններում Դատարանը գտնում է, որ առկա են նշված գործարքը վավեր ճանաչելու հիմքեր:

Վերը նշվածից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ գործարքը վավեր ճանաչելու վերաբերյալ հայցվորի պահանջը հիմնավոր է և նրա ու պատասխանողի միջև 02.06.2003թ. կնքված՝ առուվաճառքի պայմանագրի 6-րդ կետում նշված, Գյումրու Բուլվարային 3 հասցեում գտնվող, նախկինում ԲԱՏՁ-3 ՓԲԸ-ին պատկանող, թիվ 1 վարչական մասնաշենքի (մակերես՝ 665,72 քմ) և պայմանագրի 7-րդ կետում նշված, Գյումրու Բուլվարային 3 հասցեում գտնվող, նախկինում ԲԱՏՁ-3 ՓԲԸ-ին պատկանող, թիվ 2 վարչական մասնաշենքի (673,3 քմ մակերես) գույքի առուվաճառքի գործարքը պետք է ճանաչել վավեր՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոններից:

5. Դատական ծախսեր.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանը արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով դատական ծախսերը կազմված են հայցադիմումը Դատարան ներկայացնելու համար հայցվորի կողմից նախապես վճարված 4.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախապես վճարված պետական տուրքի գումարի վերադարձման պահանջ սույն գործով հայցվոր կողմը չի ներկայացրել, ուստի դատական ծախսի հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 360-362-րդ հոդվածներով՝ Դատարանը.

Վ Ճ Ո Ւ Ց

1. Մարիամ Հարությունի Ասատրյանի հայցն ընդդեմ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության մարզային բաժնի՝ առուվաճառքի գործարքը վավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

2. Վավեր ճանաչել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ մարզային բաժնի և Մարիամ Հարությունի Ասատրյանի միջև 02.06.2003թ. կնքված՝ առուվաճառքի պայմանագրի 6-րդ կետում նշված, Գյումրու Բուլվարային 3 հասցեում գտնվող, նախկինում ԲՍՏ-3 ՓԲԸ-ին պատկանող, թիվ 1 վարչական մասնաշենքի (մակերես՝ 665,72 քմ) և պայմանագրի 7-րդ կետում նշված, Գյումրու Բուլվարային 3 հասցեում գտնվող, նախկինում ԲՍՏ-3 ՓԲԸ-ին պատկանող, թիվ 2 վարչական մասնաշենքի (673,3 քմ մակերես) (գույքի անվանումը՝ համաձայն անշարժ գույքի առուվաճառքի 02.06.2003թ. պայմանագրի) առուվաճառքի գործարքը:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռը օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ մինչև օրինական ուժի մեջ մտնելը:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծանոթություն: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ 2020 թվականի _____-ին:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վարչական վարույթի

<< 11 >> 08 2023թ.

ք. Գյումրի

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանը, նախագահությամբ Գյումրի համայնքի
ղեկավարի առաջին տեղակալ Ա. Պապիկյանի, մասնակցությամբ Գյումրու
համայնքապետարանի աշխատակազմի

մայրամուտի/հարթակի և հոշոցային/համայնքի
պիտակագրության հ. Գրառույթների, զբոսայգի-
արհեստագործական հ. Գրառույթների, համայն-
քային/համայնքային պատկերասրահի հ. Գրառույթների

Վարչական ակտի հասցեատեր

Մարգարիտ Գրառույթ

(Անուն, հայրանուն, ազգանուն)

Այլանձինք

Լ. Ս. Գրառույթ Գրառույթ

(Անուն, հայրանուն, ազգանուն)

Տեղի ունեցավ նիստ, որի ընթացքում քննության առնվեցին.

Մարգարիտ Գրառույթ 25.05.2023թ. շ. Գյումրի

Բարձրագույն փշ. ու 3 կուրսի շեռքով
զբաղվելու համար օգտագործելու

Վարույթի մասնակիցների և վարույթում հանդես եկող այլ անձանց ելույթների համառոտ
շարադրանքը.

Արտահանող Վ. Արտահանող, Վ. Դա-
սարյան: Եթե, որ այս շեռքով
ժողովում 4 կուրսով բարձրագույն 3
կուրսով գրելով ՔՄՄԶ-3 գրելով պայման
իմ 2 կուրսով համարողով անհատական
գրքակց:

Ընդունված որոշման եզրափակիչ մասը.

Եւրոպական Ներքին գործերի կոմիտեի
գաղափարները մերժելով Եւրոպական
խնդրանքի փոխարենը փոխարէնում է
կոմիտեի շեղումը արեւելական և
արեւմտական կամային շեղումները հայա-
մանք քաղաքների ոչ զանազան փոխարէն
ժողովրդի օգտին:

Լրացուցիչ տեղեկություններ.

Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ.

1. *gla*
2. *gla*
3. *gla*
4. *gla*
5. *gla*

Նախագահող՝

Ա. Պապի

Մասնակից /ներ/՝

Բրայն Կ. Գրեյսթրոու
(Անուն, հայրանուն, ազգանուն)

Տ. Ջեյմս. Գրեյսթրոու

Լ. Ջեյմս. Կրեյսթրոու


Supposed
Unsupposed
Unsupposed Unsupposed

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի № 49/2 հասցեի շինության պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումի վերաբերյալ

1. Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի № 49/2 հասցեի շինությունները պատկանում է քաղաքացի Մարիամ Հարությունի Ասատրյանին (հիմք Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճիռ՝ 10 նոյեմբերի 2020թ., № ՇԴ/2555/02/20):
2. Քաղաքացի Մարիամ Ասատրյանը 2023 թվականի մայիսի 25-ին դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին (մուտքագրված համայնքապետարանում № 10026 թվագրությամբ) իրենց պատկանող Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի № 49/2 հասցեի շինությունների պահպանման ու սպասարկման համար զբաղեցված 5819.1 (հինգ հազար ութ հարյուր տասնինն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:
3. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում:
4. Հողամասը չի գտնվում «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանկարանի պահպանման գոտում:

Կատարող՝ Ա. Տոնոյան




Սեփականատեր	Ձև 1
Գյուղի համայնք	Հաստատում եմ
	Համայնքի ղեկավար
	Կ. Տ.
	ամս, ազգանուն, հայրանուն

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻՏ

Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Բուվարային փողոց 3

Մարզ, համայնք, հասցե

Հողահատության հիմքը



Սակերես հա	0.58191
Ծածկագիր	08-001-0213-0026
Նպատակային նշանակություն	արդյունաբերական օբյեկտների
Գործարմական նշանակություն	

Հողամասի				Գծային չափեր (ս)
Երկարություն (բնական) կետեր	Կողորդիկատներ			
	X	Y		
1	8400557.7386	4518830.4547		60.00
2	8400532.3815	4518884.8331		96.21
3	8400619.0517	4518926.5958		60.00
4	8400645.8252	4518872.9005		97.78
1	8400557.7386	4518830.4547		
		</		

Մասշտաբ 1:1000	Հողակալություն
Հողակալության վկայականի համարը	Հողակալության վկայականի համարը
Ստորագրություն	Ստորագրություն
Հրավարման ամսի անվանումը	Հրավարման ամսի անվանումը
ՀԱՀՀ	ՀԱՀՀ
Ստորագրություն	Ստորագրություն
Ճարտագրություն	Ճարտագրություն
Հատակագծի կազմման	Հատակագծի կազմման
18.08.23	18.08.23
29.867520	29.867520

Եղանակներ/ընթացակարգեր		Կոորդինատներ		Չափված չափեր (ս)
Եղանակներ/ընթացակարգեր	X	Y		
1	8400600 6366	4518860 2085		16.19
2	8400593.6068	4518874.7894		5.43
3	8400598.4937	4518877.1455		2.19
4	8400599.4435	4518875.1755		18.57
5	8400616.1752	4518883.2422		6.15
6	8400613.5009	4518888.7796		2.37
7	8400611.3803	4518887.7130		5.81
8	8400608.7678	4518892.8980		16.47
9	8400623.5747	4518900.1315		26.00
10	8400634.8660	4518876.7113		7.13
